ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի հանրապետության Լոռու մարզ
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

Էլ փոստ halavar.lori@mta.gov.am

Թիվ 129/16

26 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության

Լոռու մարզպետ պարոն՝

Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Ձեզ է ներկայացվում Հալավար համայնքի ավագանու թիվ 27-Ն և 28-Ա որոշումները:

Առդիր՝ 31 էջ:

Հալավար

համայնքի ղեկավար X ***Ս. Հակոբջանյան***

Կատ. Գ. Թորոսյան
հեռ. 077976800

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Լոռու մարզ
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 դեկտեմբերի 2016 թվականի N27-Ն

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ <<ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ>> ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածները, ՀՀ Կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1351-Ն որոշման 1 և 2 կետերով, Հալավար համայնքի ավագանին

որոշում է.

Հաստատել Հալավար համայնքի 2017-2021 թվականների զարգացման <<Հնգամյա ծրագիրը>> համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու	*Կողմ(5)*	*Դեմ(0)*	*Ձեռնպահ(0)*
Աբազյան Գոհար Երվանդի			
Բաբայան Վահրամ Շահվալադի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			
Հակոբջանյան Լաուրա Սարգսի			
Մաթևոսյան Արթուր Արայիկի			

Հալավար համայնքի ղեկավար *Ս. Հակոբջանյան*

Հավելված
Հալավար համայնքի զարգացման
<<Հնգամյա ծրագիրը>>
հաստատելու մասին ավագանու
2016թ.-ի N27-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ Ս. Հակոբջանյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 22 դեկտեմբերի 2016թ. N 27 -Ն որոշմամբ

2016թ.
գ. Հալավար

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ____ 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ____ 5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն ____ 5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ____ 5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ____ 6
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները ____ 10
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ____ 11
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն ____ 20
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ____ 22
3.1. Համայնքի զարգացման տեսլական ____ 22
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ____ 22
4. ՀՀԶԾ ֆինանսավորում ____
5. ՀՀԶԾ մոնիթորինգ ____

Ողջույնի խոսք

Հարգելի համայնքի բնակիչներ,

ՀՀ Լոռու մարզի Հալավար համայնքի 2017-21թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀԶԾ ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀՀԶԾ-ը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական. տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է:

ՀՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

· համայնքի ֆինանսական կարողությունը.

· համայնքի բնակչության թվաքանակը.

· համայնքում առկա ենթակառույցները և մատուցվող ծառայությունները.

· համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Ելնելով այն իրողությունից, որ համայնքը փոքր է իր բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2017-21թթ. ՀՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: ՀՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարը և ավագանու անդամները ՀՀԶԾ-ի փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀՀԶԾ-ը համայնքի յուրաքանչյուր բնակչի փաստաթուղթն է : Համայնքի ամբողջ բնակչության օժանդակությունն ու ներդրումն ապահովելու համար ՀՀԶԾ կազմման և իրականացման վերահսկողության աշխատանքները պետք է լինեն առավելագույն չափով մասնակցային: Դա կօգնի համայնքի ղեկավարին, որ ՀՀԶԾ-ը մշակվի և իրագործվի այնպես, որ արտահայտի ողջ բնակչության հավաքական կամքն ու ցանկությունը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՆԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հալավար համայնքը համարվում է հմագույն բնակավայր, հիմնադրվել է 18-րդ դարում Թավրիզից եկածներով, գտնվում է հանրապետության հյուսիսային մասում, ծովի մակերևույթից 1650-1730մ բարձրության վրա, Սանամ-Սյուրիցան և Փամբակ լեռնաշղթաների միջև, Վանաձոր-Սպիտակ միջպետական ճանապարհից 10կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից 25կմ դեպի հարավ-արևմուտք, սահմանակից է Լեռնապատ համայնքին: Համայնքի միջով հոսում է Լեռնաջուր գետը, կլիման բարեխառն է՝ ձմեռը մեղմ է, շուրջ 5 ամիս տևողությամբ, ամառը մեղմ և զով, առավելագույն ջերմաստիճանը մինչև 25 աստիճան C: Համայնքն իր մեջ ներառում է չորս բնակավայրեր՝ Լեռնաջուր, Հալավար, Քիլիսա, Գյուլաղարա: 1988 թվականի ազգամիջյան կռիվների պատճառով ադրբեջանցիները լքեցին բնակավայրերը և 1989 թվականից կազմավորվեցին նոր հայկական բնակավայրեր: Բնակավայրերից երկուսում բնակչություն չկա, բնակչությունը կենտրոնացված է Հալավար և Լեռնաջուր համայնքներում:

Ժողովրդագրություն

Համայնքն ունի՝ 94 տնտեսություն և 163 բնակիչ, որոնցից տղամարդիկ- 84, կին- 79: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1. Երեխաներ/0-6 տ./- 6
2. Երեխաներ/7-17տ./- 8
3. 18-63 տարեկան- 98
4. 63-ից բարձր տարեկան-52
5. կենցաթոշակառուներ – 52
6. Հաշմանդամներ- 8
7. Միակողմանի ծնողազուրկ երեխաներ-0
8. Արցախյան պատերազմի մասնակիցներ-4
9. Ընտրողների թիվը-128

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 6764.8 հազ ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 2679,3 հազ. ՀՀ դրամ:

Համայնքում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, կարտոֆիլի և բանջարեղենի արտադրությամբ: Արտադրվում է միս, կաթնամթերք, մեղր, բուրդ, հատապտուղներ, խոտ և այլն:

Համայնքի բնակիչները արտադրանքը սպառում են մոտակա քաղաքային շուկայում:

Համայնքը, գտնվելով մերձալպյան գոտում, հրաշալի վայր է հովեկների համար: Ամռանը մեծ քանակությամբ զբոսաշրջիկներ, ինչպես նաև քաղաքային համայնքի բնակիչներ իրենց հանգստյան օրերը անց են կացնում այս չքնաղ, գեղատեսիլ վայրում: Կից գտնվում է մերձակա անտառային գոտին: Համայնքի վարչական տարածքը և բնությունը շատ նպաստավոր են տուրիզմի զարգացման համար:

Ներհամայնքային փողոցները և ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն, բոլորը հողից են: Համայնքից մինչև մոտակա Լեռնապատ համայնքը 7 կմ է, որից 5.2կմ-ը ՀՀ կառավարության ընդհանուր օգտագործման տեղական նշանակության ավտոտրանսպորտային ճանապարհների Հալավար համայնքի սեփականություն հանդիսացող կենսական նշանակության ճանապարհահատվածն է, իսկ մինչև մոտակա շուկա՝ 25 կմ: Ներհամայնքային և միջհամայնքային հասարակական տրանսպորտ չի գործում:

Համայնքը չունի դպրոց, մանկապարտեզ, ամբուլատորիա, մշակույթի տուն, գրադարան, ակումբ:

Համայնքում առկա է ճաշարանի շենք, որը հիմնականում ծառայում է որպես ակումբ համայնքային միջոցառումների և հանրային հավաքների համար:

Համայնքն ունի փայտե հանրակացարան, որն անմխիթար վիճակում է և հիմնովին վերանորոգման կարիք ունի:

Չունի կոյուղի, որի պատճառով սանիտարահիգիենիկ պայմանները հաճախ չեն պահպանվում: Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով, մոտ 50% -ով ն խնդրահարույց է: Խիստ կարիք կա ոռոգման ներքին ցանցի նորոգման, որը գտնվում է անմխիթար վիճակում:

Համայնքում կա 94 տնտեսություն, որոնցից 7-ը ընդգրկված են ընտանեական նպաստների համակարգում: Համայնքում չկան ծնողազուրկ երեխաներ, ամուսնալուծված անձի երեխաներ, չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքներիքներ, հաշմանդամ երեխա ունեցող տնտեսություններ նույնպես չկան:

Բնակչության զբաղվածության հիմնական տեսակներն են՝

- գյուղատնտեսական ինքնազբաղվածություն՝ 54 մարդ

-վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում, մասնավոր՝ 3 մարդ

--վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում,պետական՝ 5 մարդ

-ոչ գ/տ ինքնազբաղվածություն 8 մարդ

- չունեն զբաղվածություն՝ 78 մարդ:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում

պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով,

նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային

և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թթ. նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմի-

կատի, սերմացուի և գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,

- համայնքի բնակիչների մասնակցություն տեղական ինքնակառավարմանը,

- միջհամայնքային ճանապարհի կապիտալ նորոգում, բարեկարգում և ասֆալտապատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում, զբոսաշրջության զարգացում,

- ամբուլատորիայի շենքի կառուցում և շահագործում, առաջնային առողջապահական ծառայությունների մատուցում, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակի բարելավում՝ պետական պատվերի շրջանակներում,

- աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում,

- հին տնակային հանրակացարանի շենքի վերանորոգում,

-գիշերային լուսավորվածության համակարգի անցկացում հիմնական փողոցներով,

- անօթևան և տնակային պայմաններում ապրող ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու, նաև համայնքը վերաբնակեցնելու համար կազմակերպել բնակարանաշինություն,

-համայնքում իրականացնել աղբահանություն, համայնքը դարձնել բարեկեցիկ և մաքուր, բացառել վարակիչ հիվանդությունների տարածումը, ապահովել սանիտարահիգենիկ պայմանները,

-խմելու և ոռոգման ցանցի կառուցում,

-սելավատարների կառուցում,

-հին այգիների վերականգնում, ծառատունկ,

- բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում, համագործակցություն տարբեր կազմակերպությունների հետ և տուրիզմի զարգացման ծրագրերի իրագործում,

- անտառների պահպանում, անտառտնկման աշխատանքներ , շրջակա միջավայրի պաշտպանության և մաքրման աշխատանքներ, կենդանական աշխարհի պահպանություն,

- համայնքի գազաֆիկացում,

- ՀԷԿ-ի կառուցում, աշխատատեղերի ստեղծում:

Առաջնահերթ հիմնահարցերի վերլուծություն

Հիմնահարցերի պատճառահետևանքային վերլուծություն և քարտեզագրում ըստ պատկանելության

Հիմնահարց	Պատճառ	Հետևանք	Այլընտրանքային լուծումներ	Պատկան մարմին/ դոնոր կազմակերպություն
ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	• Ֆինանսների բացակայություն	• Բնակչությունը կապահովվի բնակարաններով, կբարձրանա սոցիալ-տնտեսական մակարդակը, համայնքը կվերակառուցվի, կդառնա գեղեցիկ և բարեկեցիկ:	• Անհրաժեշտ է պետական աջակցություն • Բնակչության աջակցություն	• ՀՀ Կառավարություն Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ • Բարերարներ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ	• Ֆինանսների բացակայություն	• Պտղատու այգիների կմշակվեն, կբարձրանա այգիների բերքատվությունը, կստեղծվեն աշխատատեղեր, մրգի վերամշակման արտադրության շահագործում, մրգի իրացում, համայնքի և բնակչության եկամուտների շահութաբերության բարձրացում:	• Անհրաժեշտ է պետական աջակցություն • Բնակչության աջակցություն	• ՀՀ կառավարություն • Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	Ֆինանսների բացակայություն	• Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների շահագործում և պահպանում, անվտանգ երթևեկություն, սպառման շուկայի, մայրուղու, բժշ հաստ. հասանելիություն, սոցիալ-տնտ վիճակի բարելավում:	• Անհրաժեշտ է պետական աջակցություն • Բնակչության աջակցություն	• ՀՀ կառավարություն • Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Աղյուսակ . Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ.

բյուջեների մուտքերի կանխատեսումը

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Լոռու մարզի Հալավար համայնքի համայնքապետարանի ֆինանսական վիճակը ունի հետևյալ պատկերը:

h/h	Եկամուտի տեսակը	2015. թ. փաստացի	2016 թ. փաստացի	2017թ. փաստացի	2018թ. կանխիկ	2019թ. կանխիկ	2020 թ. կանխիկ	2021 թ. կանխիկ
	Եկամուտներ ընդհ.	7531.0	6179,3	6403,1	6530,46	6560,76	6591,36	6622,27
1	Հարկային եկամուտներ	869.9	883,2	883,2	883,2	883,2	883,2	883,2
1/1	Հողի հարկ	535.7	490,1	490,1	490,1	490,1	490,1	490,1
1/2	Գույքահարկ	334.2	393,1	393,1	393,1	393,1	393,1	393,1
2	Տուրքեր	0	0	0	0	0	0	0
3	Ընդ. ոչ հարկային եկամուտներ	2284..2	1796,1	1946,1	2077,96	2108,26	2138,86	2169,77
3/1	Պահուստային հողերի վարձավճար	0	0	0	0	0	0	0
3/2	Այլ տեղ. Տուրքի գանձ. Վճարներ	0	0	0	0	0	0	0
4/1	Դոտացիա պետ. Բյուջե	3500.0	3500,0	3500.0	3500,0	3500,0		
5	Տարեսկզբի ազատ մնացորդ	0	0	0	0	0	0	0

2.5 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Հալավար համայքում գյուղատնտեսության ու անասնապահության զարգացման համար կան բավարար նպաստավոր պայմաններ: Կան տարիներով չօգտագործված բազմաթիվ խոտհարքներ և արոտավայրեր: Համայնքում կարելի է զարգացնել նաև մեղվաբուծությունը:

Համայնքի բնակլիմայական պայմանները հրաշալի հիմք են զբոսաշրջության զարգացման համար:

Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս, մեղր, ձու, բուրդ, սակայն դժվարանում են իրացնել գյուղմթերքների իրացումը:

Համայնքում անհատ մարդկանց միջոցով կատարվում է կաթի հավաքում տարաներով և այն հանձնվում է Վանաձորի կաթի գործարան կամ այլ վերամշակման կետեր:

Մշակաբույսերի արտադրությունը համեմատաբար ցածր է ոռոգման ջուր չունենալու, հողերի ոչ բերրի լինելու պատճառովներով: Հիմնականում արտադրվում է կարտոֆիլ, կաղամբ, բանջարաբոստանային մշակաբույսեր: Բերքը հաճախ վնասվում է նաև եղանակային անբարենպաստ պայմաններից:

Համայնքի զարգացման և բնակչության հարմարության համար նախընտրելի կլինի, եթե համայնքում գործեն գյուղմթերքների վերամշակման ձեռնարկություններ կամ կենտրոններ:

Հալավար համայնքի ՏԻՄ –երը մշտապես պատրաստ են համագործակցության ու ներդրումների համար անհատ ձեռներեցների, ՀԿ-ների, միաջազգային կազմակերպությունների կողմից: Սակայն, այնուամենայնիվ, համայնքում բիզնեսի զարգացման վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի հիմնականում անբարեկարգ ճանապարհների պատճառով:

Չնայած ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում պարտադիր լիազորություններ համարյա թե չունեն, այնուամենայնիվ, համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2017-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող գյուղացիական տնտեսություններին՝ համայնքում խթանել անասնապահական, թռչնապահական և մեղվապահական մթերքների (մասնավորապես՝կաթի, մսի, ձվի, մեղրի) արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- համայնքում կազմակերպել և աստիճանական զարգացնել տնային պայմաններում բնական հյութերի արտադրությունը և իրացումը,
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- համայնքում դնել էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծման հիմքերը՝ ապահովելու զբոսաշրջիկների գիշերակացը տնային պայմաններում, հասարակական սնունդը, սպասարկումը, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցումը,
- աստիճանաբար բարեկարգել և ասֆալտապատել ներհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել գիշերային լուսավորության համակարգեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը:

Համայնքի գույքի կառավարումը

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997 թ. Թիվ 51 որոշմամբ՝ հետևյալ կազմով.

Համայնքապետարանի շենք - 1 միավոր,

Հանրակացարան - 1 միավոր,

Ճաշարան - 1 միավոր,

Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ - 1 միավոր,

Ներհամայնքային կամուրջներ – 1 միավոր,

Գյուղտեխնիկա և գործիքներ – 1 միավոր:

Համայնքը, լինելով լքված ադրբեջանցիների կողմից և ավիրված 1988 թվականի երկրաշարժից, մինչև նոր համայնքի կազմավորվելը ամեն ինչ ավիրվել, քանդվել և թալանվել է, որի պատճառով գույք չունի: Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է, տարիների ընթացքում չի կատարվել ոչ մի վերանորոգման, շենք-շինությունների շինարարական, կառուցապատման աշխատանքներ, համայնքը գտնվում է անմխիթար վիճակում, պահանջվում են ներդրումներ կապիտալ նորոգման և վերականգնման համար: Համայնքի բյուջեն չափազանց փոքր է և ինքնավերականգման հնարավորություն չի տալիս:

Դպրոցական, նախադպրոցական կրթություն, ակտիվ մշակույթային և մարզական կյանքի կազմակերպում, Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում

Համայնքը չունի դպրոցական, նախադպրոցական կրթության, մշակութային և մարզական կյանքի կազմակերպման և զարգացման կենտրոններ: Համայնքի փոքրահասակ երեխաները հաճախում են հարևան Լեռնապատի կամ Վանաձոր քաղաքի համապատասխան կենտրոններ:

Բնակարանային շինարարության խթանումը

Համայնքի առաջնային խնդիրներից է բնակարանաշինությունը, որը կխթանի նաև բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի բարձրացմանը:

Համայնքում կա 27 առանձնատուն, --- ընտանիք բնակվում է համայնքի սեփականություն համարվող փայտաշեն հանրակացարանում, որը կառուցվել է 1989 թվականին: Չնայած համայնքի բյուջեի միջոցներով տարիների ընթացքում կատարվել են վորանորոգման աշխատանքներ, սակայն հանրակացարանը այժմ համարվում է ոչ պիտանի և ենթակա է կամ հիմնովին վերանորոգման, կամ քանդման: Բնակչության մյուս մասը բնակվում են տնակներում: Տնակների մաշվածության, կենցաղային և սանիտարահիգիենիկ վատ պայմանների պատճառով բնակիչները լքում են համայնքը: Բնակարաններ չլինելու պատճառով հեռանկարային զարգացում չի նկատվում համայնքում:

Բնակարանների կարիք ունեն շուրջ 67 տնտեսություններ:

Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. Բարելավել տնակային պայմաններում ապրող ընտանիքների բնակարանային կարիքները:

2. Լուծել համայնքի բնակարանային հիմնախնդիրը:

3. Հնարավորության դեպքում համայնքում բնակություն հաստատել ցանկացող ընտանիքներին հատկացնել տնամերձ հողամաս բնակարան կառուցելու նպատակով:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ նախագահի անմիջական վերահսկողությամբ և քաղաքաշինության նախարարության ծրագրով: Դիմել կառավարության աջակցությանը:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով՝ հատուկ առանձնացված տարածքում: Համայնքը չունի կոյուղի, որի պատճառով սանիտարահիգիենիկ պայմանները հաճախ չեն պահպանվում: Անասունների գոմաղբը օգտագործվում է հողերի, այգիների պարարտացման համար: Համայնքում չկան գործող ձեռնարկություններ, որոնց թափոնները վտանգավոր են շրջակա միջավարի համար: Շրջակա միջավայրի պահպանության համար մեծ նշանակություն ունի նաև անտառների պահպանումը համայնքի վարչական տարածքում:

2017-2021թթ ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները

-Համագործակցել Վանաձորի անտառտնտեսության հետ՝ համայնքի անտառային ֆոնդի պահպանությունը. մասնավորապես՝ անտառում ձմեռամուտի սանիտարական հատումները, սահմանված նորմերին համապատասխան պատշաճ մակարդակով իրականացնելու համար, կենդանական աշխարհի պահպանությունը:

-Լայն բացատրական աշխատանքներ կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա հանար չնախատեսված վայրերում, զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից:

- Յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կամակերպել 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության ծառատնկման, ծաղկատնկման աշխատանքներ, ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Ներհամայնքային փողոցները և ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն, բոլորը հողից են: Համայնքից մինչև մոտակա մայրուղի ճանապարհի երկարությունը 10 կմ է: Ճանապարհի մի մասը ասֆալտապատ է , մի մասը ծածկույթ չունի: Համայնքում ՀՀ պետական և համայնքային բյուջեներով ամեն տարի այն վերանորոգվում է՝ խճով և ավազով, բայց հորդառատ անձրևները անընդհատ քանդում են այն: Ակնկալում ենք պետության աջակցությունը ճանապարհները ասֆալտապատելու համար: Կապահովվի տրանսպորտային բոլոր միջոցների անխափան երթևեկություն տարվա բոլոր եղանակներին, կվերացվի փողոցների ջրափոսերը և ճանապարհներին վտանգ սպառնող հատվածները:

Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն

Բնակչության զբաղվածության հիմնական տեսակներն են՝
- գյուղատնտեսական ինքնազբաղվածություն՝ 54 մարդ

-վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում, մասնավոր՝ 3 մարդ

--վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում,պետական՝ 5 մարդ

-ոչ գ/տ ինքնազբաղվածություն 8 մարդ

- չունեն զբաղվածություն՝ 78 մարդ:

Համայնքի մոտ 94 ընտանիքներից 7-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 7 ընտանիքները (ընդհանուրի մոտ 7.45 %-ը): Համայնքում բնակվում են նաև մոտ 8 հաշմանդամ:
Համայնքի ընտանիքների մեծ մասը սոցիալապես խոցելի են՝ բազմաբնույթ սոցիալ-առողջապահական խնդիրներով: Համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Վանաձորի տարածաշրջանային ՍՈՏԳ-ի (պետական պատվերի շրջանակներում), համայնքապետարանի կողմից:

Գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ
Քանի որ համայնքը չունի իր տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն), իսկ այդ փաստաթղթերի նախագծման (մշակման) պատվիրատուն, համաձայն <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, համայնքն է, հնգամյա ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝ կազմելու համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների նախահաշիվը: Համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախահաշվային արժեքը հաշվարկելուց հետո միջոցներ կձեռնարկվեն՝ հայթայթելու պահանջվող գումարը ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ/:

Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանվածության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ

Այս ուղղությամբ 2017-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ կանխարգելիչ միջոցառումները՝

1.

-Ուսումնասիրել սելավատարները և վտանգավոր տեղամասերը

-Նախապատրաստել անհրաժեշտ տեխնիկա հետագա աշխատանքների համար.

-Կատարել ջրերի հուների, սելավատարների մաքրում, կատարել ամրացման աշխատանքներ

-Պատրաստ վիճակի բերել համայնքի ՔՊ խմբերը և տեխնիկան

-Իրազեկել բնակչությանը սպասվող վտանգների և հնարավոր վարվելակերպի կանոնների մասին

-Նախապատրաստել տեխնիկան և կուտակել անհրաժեշտ քանակի վառելիք

-վտանգի պահին կազմակերպել բնակչության, նյութական արժեքների և անասունների տեղափոխումը

- Ճշտել գործողության պլանները

2. Հիմնական միջոցառումները

-Իրազեկել բնակչությանը սպառնացող վտանգների և նման պահերին իրենց գործողությունների մասին

-Տուժած շրջաններում հնարավորության սահմաններում կազմակերպել վերականգնողական և մաքրման աշխատանքներ

Հողօգտագործում

	Ընդամենը հա	Համայնքային սեփականություն	Պետական սեփականություն	Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն
Համայնքի վարչական տարածքը, այդ թվում՝	6642.2	2854.4	3717.03	70.77
գյուղատնտեսական նշանակության հողեր	5953.46	2749.42	3249.42	0
պահուստային հողեր	0	0	0	0
բնակելի շինությունների տակ հողեր	56.76	0	0	56.76
արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր	15.77	9.26	1.59	4.92
ընդերօգտագործման հողեր	0	0	0	0
ճանապարհների տակ հողեր	1.27	0	1.27	0
առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր	2.4	2.4	0	0
անտառային հողեր	491.79	0	491.79	0
ջրային ֆոնդի հողեր	18.82	0.95	17.87	0
հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ	0	0	0	0
Այլ_____(նշել)	101.93	92.37	0.47	9.09

Գյուղատնտեսություն

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը:

Բնակչության սեփական կամ վարձակալած խոտհարքները և արոտավայրերը գտնվում են համայնքից 10 կմ հեռավորության վրա, որոնք որոշակի խոչընդոտներ են առաջացնում օգտագործման համար:

Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար: Համայնքի մի քանի տնային տնտեսություններ հաջողությամբ զբաղվում են նաև մեղվապահությամբ:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի անասունների քանակը կազմել է.

		Հնդամենը
1.	Խոշոր եղջերավոր անասուններ	543
2.	կովեր	384
3.	Խոզեր	47
4.	Ոչխարներ և այծեր	350
5.	Ավանակներ և ջորիներ	0
6.	Ձիեր	11
7.	Հավեր և/կամ այլ թռչուններ	198
8.	Նապաստակներ և ճագարներ	0
9.	Մեղվաընտանիք /փեթակներով/	783
10.	Այլ _____	0

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են կարտոֆիլ և բանջարաբոստանային մշակաբույսեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքի բնակիչներն ունեն խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ

Համայնքում չկան գործող հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ: Համայնքն իր հրաշագեղ մերձալպյան բնությամբ հանդիսանում է բնական հանգստավայր մեծ թվով հովեկների համար: Այն բաց է զբոսաշրջության զարգացման ցանկացած ներդրման կամ ծրագրի համար:

Առողջության պահպանման և բարելավման ծրագրեր

Համայնքում չկա գործող ամբուլատորիա և բժշկական օգնությունը կատարվում է համայնքի բնակիչների ուժերով:

Համայնքի առողջապահական վիճակը բարվոք է: Բարվոք է նաև համայնքի սանիտարահիգիենիկ վիճակը, սակայն այստեղ դեռ բազմաթիվ անելիքներ կան: Պետք է օգտվել դոնոր ծրագրերից և կազմակերպել

--- ամբուլատորիայի կառուցում և շահագործում,

--- համապատասխան գույքի և սարքավորումների ապահովում, աշխատատեղերի ստեղծում,

--- առաջնային առողջապահական ծառայությունների մատուցում և որակի բարելավում,

---խնդիրների վաղ հայտնաբերման ու կանխարգելման նպատակով կազմակերպել բժշտական զանգվածային հետազոտություններ:

Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

Հատկապես վերջին 3-4 տարիների ընթացքում նկատվել է որոշակի դրական տեղաշարժ համայնքի ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում, ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Մյուս կողմից, համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ–երի կողմից կազմակերպված հասարակական հանրօգուտ աշխատանքներին, հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքի համայնքապետարանում տարեկան մի քանի անգամ կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը (համայնքի ղեկավարը և ավագանու անդամները) և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ:

Համայնքային կենտրոնի շենքի հաշմանդամների համար նախատեսված թեքահարթակի բացակայությունը մեծապես խոչընդոտում է նրանց մասնակցումը հանրային հավաքներին ու միջոցառումներին : Նախատեսվում է կառուցել թեքահարթակ. Այն կնպաստի հաշմանդամների մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը և որոշումների կայացմանը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերը

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում մարզկենտրոնին համեմատաբար մոտ, հանրապետական նշանակության ավտոճանապարհին համեմատաբար մոտ:
- Համայնքը գտնվում է անտառամերձ գոտում, պահուստային ֆոնդում ունի մեծ չափերի արոտավայրեր և վարելահողեր, որը հնարավորություն է տալիս զարգացնել գյուղատնտեսությունը, հատկապես անասնապահությունը:
- Համայնքն ունի գյուղատնտեսական ուղղվածություն, կաթնամթերքի և մրգի բավարար քանակություն վերամշակման ձեռնարկության շահագործման համար:
- Աշխատուժի առկայություն:
- Համայնքի աշխարհագրական դիրքը, համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը, որը հնարավորություն կտա կառուցելու հանգստյան տներ, առողջարաններ:
- Համայնքի տարածքով հոսում է Լեռնաջուր գետը, որի վրա նպատակահարմար է կառուցել փոքր ՀԷԿ:
- Համայնքում բջջային հեռախոսակապերի և հեռուստատեսային աշտարակների առկայությունը:
- Համայնքում տեղեկատվության մատչելիությունը՝ տեղական WiFi-ի առկայությունը
- Համայնքն ապահովված է խմելու, կենցաղային և ոռոգման ջրով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ավիրված բնակարաններ և համայնքային ենթակայության շինություններ, բնակֆոնդի պակաս:
- Արտագնա աշխատանքի մեկնողների թվի մեծացում:
- Գործազրկության բարձր մակարդակ, աշխատատեղերի պակաս:
- Բնակչության անվճարունակություն:
- Անմխիթար վիճակում են ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները:
- Համայնքը չունի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա գյուղատնտեսական աշխատանքներին օժանդակելու և բերքատվությունը բարձրացնելու համար:
- Բնակչության մեծ մասը բնակվում են տնակներում:
- Բնակարան չունենալու պատճառով ձմռան ամիսներին համայնքից մեկնողների թվի ավելացում:
- Չկա կոյուղու ցանց:
- Խոտհարքների մեծամասնությունը չեն օգտագործվում՝ ճանապարհ չլինելու պատճառով:
- Չի կատարվում կազմակերպված աղբահանություն:
- Հողերի անջրդիության պատճառով բնակիչների եկամուտների նվազում:
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը:
- Խմելու ջրի և ոռոգման ջրի ցանցերի բացակայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Մշակության համար պիտանի հողերի առկայություն:
- Անտառատնկման համար մեծ տարածքների առկայություն:
- Հեռանկարային ծրագրերի մշակման հնարավորություն:
- Մեծ ծավալով ջրի ամբարման հնարավորություն անջրդի հողերի ոռոգման համար:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները:
- Գյուղմթերքների իրացման շուկայի բացակայությունը:
- Բուժկետի բացակայությունը:
- Դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքների տեղափոխումը համայնքից դպրոց չլինելու պատճառով:
- Վթարային, ոչ պիտանի տնակների առկայությունը, որը չի ապահովում բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:
- Գյուղը հորդառատ անձրևներից, սողանքներից և սելավներից չպաշտպանվելու հանգամանքը:
- Բնակչության մի մասը բացակայում է հանրապետությունից և չի կատարում իր հարկային պարտավորությունները:
- Ճանապարհների անմխիթար վիճակը:
- Կոյուղու բացակայությունը և աղբահանության թերի կատարումը:
- Սարալանջերի մեծ թեքությունների պատճառով արոտավայրերի և խոտհարքների էրոզիան և օգտագործման դժվարությունները:
- Համայնքը մայրուղուն կապող ճանապարհի վիճակի հաճախակի վատացումը կապված է ճանապարհի որոշ տեղերի թեքության հետ:

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Հալավար համայնքում գալիք տարիներին՝ ՀԶԾ իրականացման արդյունքում նախատեսվում է՝

բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգևոր պայմանները, համայնքը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը
- Բարձրացնել գյուղատնտեսության շահութաբերությունը
- Համայնքը գազաֆիկացնել
- Կառուցել ՀԷԿ, ստեղծել աշխատատեղեր
- Պահպանել և վերականգնել շրջակա անտառները
- Համայնքային ճանապարհները բարեկարգել, բնակչությանն ապահովել տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությամբ
- Կառուցել և շահագործել ամբուլատորիա
- Բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները
- Լուծել կոյուղու խնդիրը
- Համայնքն ապահովել շուրջոյա խմելու ջրով
- Ապահովել բնակարաններով համայնքի բնակիչներին
- Խոտհարքներում հնարավորության դեպքում կառուցել ճանապարհներ
- Նորոգել ոռոգման ներքին ցանցը/ջրանցքներ/
- Հնարավորության սահմաններում սեյսմիկ ռիսկի նվազեցում, միջոցառումների, ծրագրերի իրականացում, համայնքի սեյսմիկ քարտեզի ստեղծում
- Անհրաժեշտության դեպքում համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների օտարում
- Համայնքի պահուստային ֆոնդից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում:

Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝ ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով: Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և

վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար

բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի

ռազմավարությունն է՝

· համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների

արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,

· համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,

· համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,

· տնային պայմաններում բնական հյութերի արտադրության կազմակերպում և աստիճանական զարգացում,

· համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,

· համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,

. համայնքի վերաբնակեցում,

· ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում և ասֆալտապատում , գիշերային լուսավորության համակարգի լիովին անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,

· համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով:

. տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում

. ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

հ/հ	ցուցանիշ	Չափի միավոր	Փաստ. 2015թ	Փաստ. 2016թ	Կանխ. 2017թ	Կանխ. 2018թ	Կանխ. 2019թ	Կանխ. 2020թ	Կանխ. 2021թ
1	Աղքատ,շեմի ընդ .հարաբ ընդ. թվին	%	65.8	65.8					
2	Սեփ. Եկամտների տարեկ.աճը	%	0	1					
3	Գրանցված բնակիչների թվի փոփոխ.	%	4	5					

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ



ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. *Աշխատակիցների թվաքանակը՝* ***4*** *:*
2. *Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝*

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ հազ. դրամ/
Համայնքի ղեկավար	1	*125000*
Աշխատակազմի քարտուղար	1	*100000*
Առաջատար մասնագետ-հաշվապահ	1	*82000*
Հավաքարար	1	*72760*
ընդանենը	4	*379760*

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Անուն, Ազգանուն, Հայրանունը	Ծննդյան թիվ	Կրթական ցենզ	Սեռ	Կուսակցական պատկանելություն	Երբ է ընտրվել	Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը	Հեռախոսահամար /բջջային/
1. Աբազյան Գոհար Երվանդի	01.10.1961	միջն.	իգ	ՀՀԿ	02.10. 2016	չի աշխատում	093785892
2. Բաբայան Վահրամ Շահվալադի	20.09.1973	միջն.	ար	անկուս	02.10. 2016	չի աշխատում	077584078
3. Հակոբջանյան Լաուրա Սարգսի	18.10.1994	բարձր.	իգ	անկուս	02.10. 2016	չի աշխատում	098592575
4. Մաթևոսյան Արթուր Արայիկի	05.12.1983	միջն.	ար	անկուս	02.10. 2016	չի աշխատում	098585753
5. Մարտիրոսյան Նինա Լևոնի	06.12.1948	միջն.	իգ	անկուս	02.10. 2016	չի աշխատում	077078587

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ1

« ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների և համայնքի եկամուտների աճ%--ով	0	4	5	7	9	10
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում գյուղատնտեսության բնագավառում, գյուղմթերքների արտադրության բարձրացում, աշխատատեղերի ստեղծում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսության բնագավառում շահագրգիռ տնտեսությունների աճ%-ներով	0	4	5	7	9	10
	2. Բարձր արտադրողական և ժամանակակից գյուղ. տեխնիկայի ունենալը, գործազրկության մակարդակի նվազեցումը, եկամուտների բարձրացումը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Բերքի անկորուստ հավաքման աճ%-ով	0	30	40	60	70	80
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1դաընթացների կազմակերպում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Ֆինանսական միջոցների ձեռք բերում 2.2Բարձրարտադրողականությամբ փոքր տրակտորի, բարձր արդյունավետությամբ չորանոցների ձեռք բերում , մրգրերի և հատապտուղների վերամշակման փոքր արտադրամասի հիմնում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 300 հազ դրամ Կապիտալ ծախսեր՝ 20 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝20,3 մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.ֆինանսական միջոցներ տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն 2.Համայնքում կոոպերատիվի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դոնոր կազմակերպության կողմից չնախատեսված իրավիճակ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է ստեղծել կոոպերատիվ , ժամանակակից բարձր արտադրողական փոքր տրակտորի ձեռք բերում, բարձր արդյունավետությամբ չորանոցների ձեռք բերում , մրգրերի և հատապտուղների վերամշակման փոքր արտադրամասի հիմնում: Որոնց շնորհիվ բերքի կորոստը կկրճատվի և բնակչության եկամուտները կավելանան 10 % և ավելի:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

« ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային ճանապարհային ենթակառույցների պահպանություն						
Ծրագրի անմիջական նպատակ	• Ապահովել բնակչությանը բնակարաններով • Բարձրացնել սոցիալ-տնտեսական մակարդակը • Համայնքը վերակառուցել, դարձնել գեղեցիկ և բարեկեցիկ:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ծրագիրն իրականացման արդյունքում համայնքը կունենա բնակարաններ /թվով/	0	12	12	12	12	12
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ընտանիքները կապահովվեն բնակարաններով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Կապահովվի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը/ թվով/	0	50	100	150	200	300
	2. Երիտասարդները կմնան համայնքում, արտագաղթը կկանխվի, կբարձրանա ծնելիությունը, կավելանա բնակչությունը:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Բնակչության աճ %-ով	0	6	10	30	50	100
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 1.2 ֆինանսական միջոցների հայթայթում՝ պետական և դոնոր կազմակերպություններից 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ շինարարական նյութերի ձեռք բերում 2.2 Համապատասխան պայմանագրերի կնքում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ տարեկան 300 հազ դրամ Կապիտալ ծախսեր՝ 579,7մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 580 մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. ֆինանսական միջոցների առկայություն դոնորներից 2, Ազգաբնակչության ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դոնորներից ֆինանսական միջոցների հայթայթման խնդրները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք, ՀՀ բնակչություն և սփյուռք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի 94 տնտեսություններից բնակարանով ապահովված են 31 ընտանիք, մյուսներն ապրում են ժամանակավոր կացարաններում կամ ինքնաշեն փայտե տնակներում: Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով չեն կառուցվել բնակարաններ: Համայնքի առաջնային հիմնախնդիրներից է բնակարանաշինությունը: Սույն ծրագրով առաջարկվում է յուրաքանչյուր տարի կառուցել 12 բնակարան:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

«Ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում:						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	105	110	115	125	140
Ծրագրիմիջանկյալ արդյունքներ	1. Բարեկարգված միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1	2	2	1	1
	2. Հասարակական տրանսպորտ						
	Ցուցանիշներ Միջհամայնքային երթուղի	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	1	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում: 1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում: 1.3.Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում: 1.4.Հեղեղատարների մաքրում և վերանորոգում: 1.5. կանգառի կառուցում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտ ներդրվի նաև Հալավար համայնքում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝տարեկան 300 հազ. դրամ Կապիտալ ծախսեր՝ 6,7 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 7 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Հալավար համայնքի վարչական բնակավայրերի բոլոր բնակիչները և հարևան 2 համայնքների բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրիհամառոտ նկարագրություն	Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն և բացակայում է միջհամայնքային տրանսպորտը: Համայնքի 100 %-ը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:						

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Լոռու մարզ
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 դեկտեմբերի 2016 թվականի N28-Ա

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 07.12.2016թ, թիվ 97 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լոռու մարզի Հալավար գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքերից 06-059-0070-0007 կադաստրային ծածկագրից 0.0885 հա, պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 06-059-0363-0001 կադաստրային ծածկագրից 1,4088 հա արոտ, 06-059-0357-0001 կադաստրային ծածկագրից 0,1580 հա, 0,3901 հա (2 հողակտոր, ընդամենը՝ 0,548 հա) արոտ, 06-059-0365-0001 կադաստրային ծածկագրից 0,0213 հա այլ հողատեսք փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ օբյեկտների հողերի գործառնական նշանակության:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

Համայնքի ավագանու	Կողմ(5)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
Աբազյան Գոհար Երվանդի			
Բաբայան Վահրամ Շահվալադի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			
Հակոբջանյան Լաուրա Սարգսի			
Մաթևոսյան Արթուր Արայիկի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ